655.4
4-21

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

„ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ“

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
~~Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ~~

ԹԻՖԼԻՍ
Էջմիածնայ. Օր. Ն. Աղանեանցի, Պօլից. 7
1913

17 05 2013

655.4
Ա-21

24 SEP 2010

Թիֆլիսի Նահանգական՝ ընկերութիւններին վերաբերեալ Անդամի օրագրական որոշմամբ 1912 թվի յունիսի 18-ին Հայոց Հրատարակչական «Նոր Մանուկներին» Ընկերութիւնը մուծուած է մատեանի մէջ 180 համարի տակ և այս Կանոնադրութիւնը հաստատուած է և յիշեալ Ընկերութեան գործունէութիւնն սկսելու համար ոչ մի արգելք չկայ։

1912 թվի օգոստոսի 2։

Նահանգապետի փոխարէն՝
Փոխ-Նահանգապետ Ե. Պանով.

370
Զ013-ԿԱ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
„ՆՈՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ"
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԹԵՏԱԿԱՆ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԱՐԽԱՆԳԵԼՍԿԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ն 1004
Ն 1584

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

§ 1. Հայոց Հրատարակչական՝ «Նոր մանուկներին» Ընկերութիւնը հիմնում է Թիֆլիսում լուսաւորութիւն տարածելու նպատակով. այդ նպատակը իրագործելու համար Ընկերութեանը, համապատասխան դէպքերում պատշաճաւոր թոյլտուութեամբ և այս առարկային վերաբերեալ գործող օրէնքների և պետական առանձին կարգադրութիւնների պահպանութեամբ, թոյլ է տալիս.—

ա.) հրատարակել Կատարինէ Քր. Լիսիցեանի հիմնած «Հասկեր» մանկական ամսագիրը, նոյնպէս և հայերէն պարբերական

21.074

ուրիշ մանկական հրատարակութիւններ, իսկ եթէ միջոցները ներեն՝ նաև բ.) հրատարակել հայերէն լեզուով ինքնուրոյն և թարգմանական մանկական գրքեր, պատկերներ, խաղեր և մանկական ամեն տեսակ զարգացուցիչներ և գ.) հրատարակել հայերէն լեզուով, ընտանեկան դաստիարակութեան վերաբերեալ մանկավարժական աշխատութիւններ։

Ծանօթ. Եթէ որևէ պատճառով անհնարին լինի իրագործել ա. նպատակը, Ընկերութիւնը շարունակում է իր գոյութիւնը և իր միջոցները գործադրում է բ. և գ. նպատակների համար։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

§ 2. Ընկերութիւնը իրաւունք ունի անշարժ գոյք ձեռք բերելու և առհասարակ օժտուած է իրաւական անձի բոլոր արտօնութիւններով։

§ 3. Ընկերութիւնը իրաւունք ունի մրցանակ նշանակելու մանկական գրականութեան և ընտանեկան դաստիարակութեան վերաբերեալ լաւագոյն հայերէն գրուածքների համար։

§ 4. Ընկերութիւնը ունի կնիք՝ «Հայոց Հրատարակչական՝ «Նէր մանուկներին» Ընկերութիւն»։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՆՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

§ 5. Ընկերութիւնը բաղկացած է հետևեալ անդամներից՝ ա. հիմնադիր, բ. պատուաւոր, գ. մշտական, դ. իսկական և ե. աշխատակից։ Անդամ կարող են լինել երկու սեռի անձինք։ Անդամների թիւը սահմանափակուած չէ։

Ծանօթ. Ընկերութեան անդամ չեն կարող լինել՝ ա) անչափահասները, բ) իսկական ծառայութեան մէջ եղած զինուորները ու իւնկերները, գ) աշակերտները և դ) դատարանով իրաւունքից զրկուածները։

§ 6. Հիմնադիր անդամ կարող են լինել նրանք, որոնք անդամ են դրել մինչև առաջին Ընդհանուր Ժողովը, այս Կանոնադրութեան հաստատումից յետոյ։

§ 7. Պատուաւոր անդամ ընտրուում են Ընդհանուր Ժողովի կողմից դաղտնի քուէարկութեամբ, ներկայ եղող անդամների $\frac{2}{3}$ ձայների առաւելութեամբ, Ընկերութեան 5 անդամների կամ Վարչութեան առաջարկութեամբ, այնպիսի անձինք, որոնք առանձին ծառայութիւն են մատուցել Ընկերութեանը կամ թէ յայտնի են մանկական կամ մանկավարժական գրականութեան իրենց մատուցած ծառայութիւնով։

§ 8. Մշտական անդամներն ընտրում են Վարչութեան կողմից ձայների պարզ առաւելութեամբ, գաղտնի քւէարկութեամբ և վճարում են Ընկերութեան օգտին միանուագ առնւազն 50 ռ.

§ 9. Իսկական անդամներն ընտրում են Ընդհանուր Ժողովի կողմից գաղտնի քւէարկութեամբ, ձայների պարզ առաւելութեամբ, Ընկերութեան 5 անդամների կամ Վարչութեան առաջարկութեամբ։

§ 10. Հիմնադիր և իսկական անդամները վճարում են տարեկան առնւազն 2 բուբլի։

§ 11. Աշխատակից անդամ ընտրում են մէկ տարի ժամանակով այնպիսի անձինք, որոնք իրանց աշխատանքով և գիտութեամբ կարող են նպաստել Ընկերութեան նպատակներին։

§ 12. Ընկերութեան բոլոր տեսակի անդամները հաւասար իրաւունքներ ունեն, բացի աշխատակից անդամներից, որոնք մասնակցում են Ընդհանուր Ժողովի նիստերին միայն խորհրդակցական ձայնով։

§ 13. Պատուաւոր և աշխատակից անդամների համար պարտաւորեցուցիչ չէ անդամավճար վճարելը։ Այն հիմնադիր և իսկական անդամները, որոնք մինչև հոկտեմբեր ամսի մէկը անդամավճար չեն վճարել, Ընկերութիւնից հեռացած են համարւում. որանցից նրանք, որոնք մինչև տարւայ վերջը կը վճարեն անդամավճարը, եւ են ընդունւում Ընկերութեան կազմի մէջ առանց քւէարկութեան։ Ընդհանուր Ժողովին հիմնադիր և իսկական անդամներից կարող են մասնակցել միայն նրանք, որոնք վճարել են անդամավճարը։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 14. Ընկերութեան միջոցները բաղկացած են՝

ա) անդամավճարներից,

բ) § 1-ի մէջ յիշւած՝ Ընկերութեան նպատակների իրագործումից ստացւած գումարներից,

գ) դրամագլխի տոկոսներից և Ընկերութեան պատկանած անշարժ և շարժական գոյքերի եկամուտներից,

դ) նվիրաբերութիւններից,

ե) յօդուտ Ընկերութեան, ամեն մի առանձին դէպքում պատշաճաւոր թոյլտւութեամբ, կարգացւած դասախօսութիւնների, ուսած ներկայացումների, համերգների, երե-

կոյթների, զբօսանքների և ամեն տեսակ զարճութիւնների արդիւնքից։

§ 15. Ընկերութեան դրամները լինում են՝ ա.) ընթացիկ, բ.) պահեստի և գ.) յատուկ։

§ 16. Ընկերութեան այս կամ այն նպատակի համար նուիրուած յատուկ գումարի գործադրութիւնը կարող է փոխուել միմիայն նուիրաբերողի հաւանութեամբ. իսկ կտակած գումարների նպատակը մնում է անփոփոխ։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆԸ

§ 17. Ընկերութեան գործերը վարում են՝

1) Ընդհանուր ժողովը, 2) ա. Վարչութիւնը, ա. Խմբագրական և գ. Վերաստուգիչ մասնաժողովները, որոնք գտնուում են Թիֆլիսում։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

§ 18. Ընդհանուր ժողովները գումարուում են Թիֆլիսում՝ 1) պատուաւոր և իսկական անդամներ ընտրելու, 2) Վարչութեան և Ընկերութեան առանձին անդամների առաջարկները քննելու համար։

§ 19. Տարէնը երկու անգամ գումարուում են հերթական Ընդհանուր ժողովներ՝ ա) ապրիլ ամսից ոչ ուշ՝ Ընկերութեան նախընթաց տարեայ գործունէութեան և դրամական կացութեան հաշիւը քննելու և հաստատելու համար և բ) հոկտեմբեր ամսից ոչ ուշ՝ առաջիկայ տարեայ նախահաշիւը և գործունէութեան ծրագիրը քննելու ու հաստատելու և Վարչութեան ու Վերաստուգիչ մասնաժողովի անդամներին ընտրելու համար։

Յանօթ. Հաշուետուութեան տարին հաշուում է յունուարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը։

§ 20. Արտակարգ Ընդհանուր ժողովներ գումարուում են՝ ա) Վարչութեան հայեցողութեամբ, բ) Վերաստուգիչ մասնաժողովի պահանջմամբ և գ) Ընկերութեան 10-ը անդամների՝ Վարչութեան տուած դրաւոր յայտարարութեամբ։

§ 21. Ընդհանուր ժողովներ հրաւիրուում են նիստից առնուազն մի շաբաթ առաջ Ընդհանուր ժողովի սահմանած եղանակով։

§ 22. Ընդհանուր ժողովը կայացած է համարուում, եթէ ներկայ է Թիֆլիսում եղած անդամների ½ մասը, բացի այն դէպ-

քերից, երբ քննում են Կանոնադրութիւն փոփոխելու և Ընկերութեան գործունէութիւնը դադարեցնելու խնդիրները, որպիսի գործերը վճռելու համար անհրաժեշտ է առաջին նիստում Թիֆլիս եղած անդամների ⅔ մասի ներկայութիւնը։ Եթէ որոշ թիւով անդամներ ներկայ չը լինելու պատճառով Ընդհանուր ժողովը չի կայանում, միևնոյն խնդիրների քննութեան համար մի շաբաթից ոչ վաղ հրաւիրւում է երկրորդ Ընդհանուր ժողով, որը կանոնաւորապէս է համարւում, քանի անդամ էլ որ ներկայ գտնուեն։

§ 23. Ընդհանուր ժողովը բաց է անում Վարչութեան նախագահը, և այնուհետև ժողովը ընտրում է իր համար նախագահ և քարտուղար, բայց ոչ Ընկերութեան պաշտօնավար անձերից։

§ 24. Ընդհանուր ժողովում խնդիրները վճռւում են ձայների պարզ առաւելութեամբ, բացի պատաւոր անդամ ընտրելու, պահեստի գումարը ծախսելու, անշարժ կալուածք ծախելու կամ գնելու, Ընկերութեան Կանոնադրութիւնը փոփոխելու և գործունէութիւնը դադարեցնելու խնդիրներից. այս խնդիրները վճռելու համար պահանջւում է ձայների ⅔ առաւելութիւն։ Ձայների հաւասարութեան դէպքում նախագահի ձայնը առաւելութիւն է տալիս։

Ծանօթ. Ընդհանուր ժողովների քննութեանը թոյլատրւում են այնպիսի խնդիրներ, որոնք անմիջական կապ ունեն Կանոնադրութեան որոշած գործունէութեան հետ և որոնց մասին վաղօրօք ծանուցւած է Ընկերութեան անդամներին։

2. ՊԱՇՏՕՆԱՎԱՐ ԱՆՁԻՆՔ

Ընդհանուր կանոններ

§ 25. Վարչութեան և մասնաժողովների բոլոր անդամները, ինչպէս և նրանց բոլոր փոխ-անդամները ընտրւում են Ընդհանուր ժողովում, գաղտնի քուէարկութեամբ, ձայների պարզ առաւելութեամբ (½-ից աւելի) երեք տարով, բացի Վերատեսուչ մասնաժողովի անդամներից և փոխ-անդամներից, որոնք ընտրւում են մէկ տարով։ Վարչութեան կազմից ամեն տարի դուրս է գնում անդամների և փոխ-անդամների ⅓-ը, սկզբում վիճակով, իսկ յետոյ ընտրութեան ժամանակի համեմատ։ Դուրս գնացողները կարող են կրկին ընտրւել։

§ 26. Վարչութեան և Վերաստուգիչ մասնաժողովի ամեն երկու անդամների համար ընտրւում է մի փոխ-անդամ. փոխանդամը փոխարինում է պաշտօնավար անձին նրա մահւան, պաշտօնից հրաժարւելու, տեւական հիւանդութեան կամ քաղաքից բացակայելու դէպքում։

Ծանօթ. Վարչութեան այն անդամը, որ երեք ամիս շարունակ առանց որև է յարգելի պատճառի չի յաճախում Վարչութեան նիստերին, համարւում է Վարչութիւնից հեռացած։

§ 27. Բոլոր ընտրովի պաշտօնները վարւում են ձրի. բայց եթէ Ընկերութեան գործունէութիւնը ընդարձակւի, Ընդհանուր ժողովին է թողնւում այս կամ այն պաշտօնավար անձին վարձատրութիւն նշանակել, բայց միմիայն ընտրութիւնները կատարելուց առաջ։

§ 28. Վարչութեան և մասնաժողովների նիստերը համարւում են օրինաւոր, երբ ներկայ են անդամների կէսից աւելին։

Ա. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

§ 29. Վարչութիւնը գտնւում է Թիֆլիսում և կազմւած է առնւազն 5 անդամից, որոնք իրենց միջից ընտրում են նախագահ, փոխ-նախագահ, քարտուղար և գանձապահ։

§ 30. Վարչութիւնը կարող է իր միջից ընտրել յատուկ անձինք, կամ յատուկ ենթաժողովներ, Վարչութեան ցուցմունքների համեմատ Ընկերութեան այս կամ այն ճիւղը անմիջապէս կառավարելու համար։

§ 31. Վարչութիւնը վարում է՝ ա) Ընկերութեան տնտեսական մասը և պահում է դրամական հաշիւները, բ) հրատարակում է Խմբագրական մասնաժողովից հաւանութիւն ստացած գրքեր և այլ հրատարակութիւններ, գ) կազմակերպում է բաժանորդագրութեան ընդունելութիւնը և Ընկերութեան հրատարակութիւնների վաճառումը, դ) պատրաստում է Ընդհանուր ժողովին ներկայացնելու համար տարեկան ընդհանուր հաշիւն Ընկերութեան նախընթաց տարւայ գործունէութեան և գումարների կացութեան մասին և առաջիկայ տարւայ նախահաշիւն ու գործունէութեան նախագիծը, է) ընտրում է մշտական և գործակից անդամներ և յանձնարարում է Ընդհանուր ժողովին պատւաւոր և իսկական անդամներ, զ) հրաւիրում է Ընդհանուր ժողովներ այս կանո-

նադրության § 18—24 հիման վրա, է) քննում է առանձին անդամների առաջարկներն և հարցապնդումները և հինգ անդամի գրաւոր պահանջմամբ իր եզրակացության հետ միասին ներկայացնում է հերթական Ընդհանուր ժողովին, ը) ընտրում է Խմբագրական և այլ մասնաժողովների անդամների և նրանց համար հրահանգներ կազմում, թ) նշանակում է և արձակում Ընկերության մէջ վարձով ծառայողներին և ռոճիկ է նշանակում նրանց, ժ) ղեկավարում և միացնում է Ընկերության գործունէությունը, ի) Ընկերության անունից յարաբերության մէջ է մտնում հաստատությունների և անձանց հետ և լ) պաշտպանում է Ընկերության շահերը, իբրև իրական անձ, դատարանի առաջ և առհասարակ ուր հարկն է։

§ 32. Վարչության նախագահը հսկում է այս Կանոնադրության և Ընդհանուր ժողովի, Վարչության և Խմբագրական մասնաժողովների որոշումների ճիշտ կատարման, հրաւիրում է Ընդհանուր ժողովներ և Վարչության նիստեր։ Նրա բացակայության

ժամանակ նրա պարտականությունները կատարում է փոխ-նախագահը։

§ 33. Վարչության քարտուղարը պատրաստում է վարչության արձանագրությունները, կառավարում է ամբողջ դիւանատունը և պահում է Ընկերության դիւանը։

§ 34. Վարչության գանձապահը վարում է ընկերության դրամարկղը, ծախսեր է անում Վարչության որոշումների համեմատ, պահում է Ընկերության դրամական վաւերաթղթերն ու արժէթղթերը, պատասխանատու է Ընկերության գումարների ապահովության համար և հսկում է հաշվապահության կանոնաւոր ընթացքին։

§ 35. Ընթացիկ ծախսերի համար գանձապահը կարող է ունենալ իր մօտ մինչև հարիւր ռուբլի. իսկ Ընկերության մնացեալ գումարները ըստ Վարչության որոշման պահւում են տեղական դրամատներից մէկում

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

§ 36. Պարբերական հրատարակությունները խմբագրելու, աշխատությունները ապագրելի այլ նիւթեր ընտրելու, մրցանակաբաշխության նիւթեր յայտարարելու և

ներկայացրած աշխատութիւններից արժանաւորագոյնին մրցանակ յատկացնելու համար Վարչութիւնը ընտրում է մէկ կամ մի քանի Խմբագրական մասնաժողովներ, որոնք գործում են Վարչութեան մշակած հրահանգների համեմատ։ Առանց Խմբագրական մասնաժողովի հաւանութեան ոչ մէկ գիրք չի կարող տպել։

§ 37. Պարբերական հրատարակութիւններ խմբագրելու համար Խմբագրական մասնաժողովներ ընտրւում են ամբողջ բաժանորդագրական տարով։

Ծանօթ. Ստեփան Դանիէլեան Լիսիցեանը մտնում է «Հասկերի» խմբագրական կազմի մէջ իբրև մշտական անդամ։

§ 38. Խմբագրական մասնաժողովների նախագահները մասնակցում են Վարչութեան նիստերին խորհրդակցական ձայնով և Վարչութեան նախագահը նոյն իրաւունքներով Խմբագրական մասնաժողովներին։

§ 39. Հեղինակներին և թարգմանիչներին տալիք վարձատրութեան սակագինը որոշում է Վարչութիւնը Խմբագրական մասնաժողովի առաջարկութեամբ։

ԽԱՌԸ ԺՈՂՈՎՆԵՐ

§ 40. Վարչութեան և պարբերական հրատարակութիւնների խմբագրական մասնաժողովների մէջ տեղի ունեցած տարաձայնութիւնները վերացնելու, նոյնպէս և գործունէութեան ընդհանուր նախագիծը մշակելու համար Վարչութեան նախագահը հրաւիրում է խառը ժողովներ Վարչութեան և համապատասխան Խմբագրական մասնաժողով անդամներից. այս դէպքում աւելի շատ անդամ ունեցող կոլեգիան նոյնքան ձայն ունի, որքան որ միւս կոլեգիան։ Ձայների մեծամասնութեամբ ընդունւած որոշումները պարտաւորական են թէ Վարչութեան և թէ յիշեալ Մասնաժողովի համար։

§ 41. Խառն ժողովին նախագահում է Վարչութեան նախագահը։

ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

§ 42. Վերաստուգիչ մասնաժողովը ընտրւում է մէկ տարով առնւազն երեք անդամից և իր միջից ընտրում է նախագահ և քարտուղար։

§ 43. Վերաստուգիչ մասնաժողովը իրաւունք ունի իրապէս քննելու Վարչու-

թեան և Խմբագրական մասնաժողովի հաշիւները, ստուգելու Վարչութեան նախընթաց տարւայ հաշիւը նախ քան Ընդհանուր Ժողովին ներկայացնելը և այս հաշւի մասին իր նկատողութիւնները տանում է Ընդհանուր Ժողովին։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՓԱԿՈՒՄԸ

§ 44. Այս Կանոնադրութեան մէջ որևէ փոփոխութիւն կատարւում է § 22 և § 24 պայմանների համեմատ և սահմանուած օրինական կարգով ներկայացւում է մատեան մուծելու համար։

§ 45. Ընկերութեան գործունէութեան դադարման դէպքում հրաւիրւում է Արտակարգ Ընդհանուր Ժողով, որը և որոշում է Ընկերութեան գոյքը, ամբողջովին կամ մասմաս, այս կամ այն հաստատութիւններին յանձնելու։

ՀՍԽՀ Հ. ՀԱՅՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Publicnaya Biblioteka
7/XI-1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0296044

24.017